



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 հունիսի 2011 թվականի N 227-Ա

ք. Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ««Քաղաքացիական ծառայության մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող ատեստավորման հանձնաժողովի կազմը՝

Վաչագան Թադևոսյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Վահագն Նազոյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ

Սուրեն Թունյան - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ

Միքայել Եղիազարյան - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ

Գևորգ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության ««Հրազդանի Պ. Սևակի անվան N 8 հիմնական դպրոց»» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն

Յաշա Սահակյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության ««Բջնիի միջնակարգ դպրոց»» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն

Հանձնաժողովի նախագահ նշանակել **Վ. Թադևոսյանին**

Հանձնաժողովի քարտուղար նշանակել **Մ. Եղիազարյանին**։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ